Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ղեկավարի 2017 թվականի տարեկան հաշվետվություն

Արմավիրի մարզի Հացիկ համայնքն ունի 699 տնտեսություն, 2723 բնակիչ: Համայնքն ունի 1353.3 հա վարչական տարածք, որից 935 հա սեփականաշնորհված հողեր են (մեկ հողաբաժնի չափը 0.71հա է), պետպահուստի հողերը 55,04 հա են: Համայնքապատկան բնակելի տների թիվը 422 է, ընդհանուր մակերեսը՝ 29370 քառ. մետր է:

Հացիկ համայնքի 2017 թվականի տարեկան բյուջեն ունի հետևյալ տեսքը.

Եկամտային մաս	պլան /հազար դրամ/	կատարված /հազար դրամ	
<u>վարչական բյուջե</u>			
1.հողի հարկ	13600.0	15391.9	113.2%
2.գույքահարկ փոխդրամիջ.	4000.0	4123.3	103.1 %
3.գույքահարկ շենք. շին.	170.0	106.1	62.4%
4.տեղական տուրքեր	250.0	166.0	66.4%
5.հողի վարձավճար	1765.0	1645.3	93.2%
6.տեղական վճարներ	263.0	124.0	47.1%
6.պաշտոնական տրասֆերտներ	31032.8	31032.8	100 %
որից պետ.բյուջեից դոտացիա	29699.1	29699.1	100.0%
սուբվենցիա	1333.7	1333.7	100.0%
7.տարեսկզբի ազատ մնացորդ	1748.3	1748.3	
ընդամենը	52829.1	54337.7	102.9%
<u>ֆոնդային բյուջե</u>			
հողի օտարումից մուտքեր		29.6	
վարչական բյուջեի պահուստային			
ընդամենը	52829.1	54367.3	102.9%

Ծախսային մաս	պլան /հազար դրամ/	կատարված /հազար դրամ/	
<u>վարչական բյուջե</u>			
տեղական ինքնակառավարում	20400.0	18718.8	78.0%
համայնքային այլ ծառայություններ	3610.0	1792.5	49.7%
սոցապահովագր. և ապահով.	6500.0	5880.0	90.5%
մշակույթ, կրոն, սպորտ	2020.0	1789.6	55.6%
կրթություն	2096.7	1797.7	85.8%
դաշտամիջ.ճան.նորոգում	900,0	650.0	72.2%
սան. մաքրում	2270.0	1483.5	65.4%
փողոցների լուսավորում	3000.0	726.4	24.2%
ջրամատակարարում	8670,0	7890.5	91.0%
պահուստային ֆոնդ	1614.1		
ընդամենը	51080.8	40729.0	79.7%

Ֆոնդային բյուջե			
սարքեր սարքավորումներ	420.0	181.0	43.9%
տրանսպորտային միջոցներ	268.3	0	
այլ ակտիվների ձեռք բերում	80.0	80.0	100.0%
կապ. նորոգումների ծախսեր	980.0	969.0	98.9%
ընդամենը	1748.3	1230.0	70.4%
ընդամենը ծախսեր	52829.1	41959.0	79.5%

Հացիկ համայնքի 2017 թվականի բյուջեն կազմելիս հաշվի են առնվել հետևյալ առաջնահերթ խնդիրները՝

ա/ խմելու ջրի մատակարարումը

բ/համայնքի աղբահանությունը

գ/ճանապարհների վերանորոգումը

դ/փողոցների լուսավորումը

Գյուղատնտեսություն

Համայնքում հիմնականում զբաղվում են պտղաբուծությամբ և այգեգործությամբ, ինչպես նաև բոստան-բանջարանոցային կուլտուրաների մշակմամբ:

2017 թվականին ստացվել է ծիրանի, դեղձի,սալորի նխաղողի բերքը :

Համայնքապետարանը մարզպետարանի հետ միասին աջակցել է գյուղացուն իրացնելու ստացված բերքը՝ կապ հաստատելով տարբեր վերամշակող և արտահանող կազմակերպությունների հետ:

Գյուղացուն ցույց է տրվել աջակցություն նաև պարարտանյութի,դիզ. վառելիքի և թունաքիմիկատների ձեռք բերման գործում:

Կրթություն

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց . 33 ուսուցիչ, 290 աշակերտ: Դպրոցի երկու մասնաշենքերը հիմնանորոգված են:

Համայքապետարանի աջակցությամբ դպրոցի շենքում բացվել և գործում է նախակրթարան: Համայքապետարանը դպրոցին տրամադրում է դրամաշնորհ, որը որպես աշխատավարձ վճարվում է նախակրթարանի կրտսեր խմբի դաստիարակին:

Կանանց տոների առթիվ դպրոցի ուսուցչուհիներին, աշխատակցուհիներին, բարձր դասարանի աշակերտուհիներին, բուժամբուլատորիայի աշխատակցուհիներին մատուցվել են նվերներ և ծաղիկներ:

Վերջին զանգի կապակցությամբ շրջանավարտներին ցույց է տրվել դրամական օգնություն:

Նոր ուսումնական տարվա կապակցությամբ դպրոց հաճախող 25 առաջին դասարանցիներին համայնքապետարանի կողմից բաժանվել են պայուսակներ և գրենական պարագաներ:

Մանկապարտեզը չի գործում, բնակեցված է փախստական և երկու անապահով բազմազավակ ընտանիքներով:

Մշակույթ

Գյուղն ունի մեկ երկհարկանի 300 տեղանոց մշակույթի տուն : Շենքում է գտնվում նաև գյուղի գրադարանը: Գրադարանի սենյակը նորոգվել է, տեղադրվել են նոր պատուհաններ: Շենքը գտնվում է կիսավթարային վիճակում, որի պատճառով համայնքը զրկվել է մշակութային միջոցառումներ՝ կինո, թատրոն, համերգ, կազմակերպելու հնարավորությունից:

Մշակույթի տան վերանորոգման համար կազմվել է նախահաշիվ 48 մլն դրամի և ներառվել է հնգամյա ծրագրում: Մշակույթի տան տանիքը հիմնանորոգված է: Համայնքն ակնկալում է աջակցություն սոցներդրումների ծրագրերի շրջանակներում՝ շենք ամբողջությամբ հիմնանորոգելու համար:

Գյուղում գործում է արևելյան մարտարվեստի խմբակ, որի պարապմունքներն անց են կացվում դպրոցի մարզադահլիճում: Խմբակն ունի համապատասխան գույք: Դպրոցում սկսել է գործել պարի խմբակ:«Հացիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը նույնպես իր աշխատանքները կազմակերպում է գյուղի դպրոցի մասնաշենքում:

Մշակույթի տան հիմնանորոգումից հետո խմբակներն իրենց աշխատանքները կկարողանան կազմակերպել ավելի լիարժեք պայմաններում:

Սոցօգնություն

2017 թվականի բյուջեով նախատեսված է 6.0 մլն դրամի սոցօգնություն համայնքի անապահով ընտանիքներին,որից տրամադրվել է 5720.0 հազար դրամը : Օգնությունը տրամադրվում է բնակիչների դիմումների համաձայն:

Համայքապետարանը նաև ցուցաբերել է աջակցություն համայնքի բնակիչներին, որոնք հանդիսանում են հանրապետության տարբեր ԲՈՒՀ-երի ուսանողներ՝ ուսման վարձը մասնակի վճարելով: 2017 թվականին ֆինանսական աջակցություն են ստացել 25 ուսանողներ:

Ներհամայնքային և միջդաշտային ճանապարհներ

Ներհամայնքային ճանապարհներն ունեն խիստ նորոգման կարիք:

Միջդաշտային ճանապարհները մշտապես բարեկարգվում են, որպեսզի գյուղմթերքները ժամանակին ու անվնաս դուրս բերվեն դաշտից և իրացվեն: 2017 թվականի ընթացքում այդ նպատակով համայնքի բյուջեից ծախսվել է 650,0 հազար դրամ: Նորոգվել է գյուղ մտնող ճանապարհը:

Խմելու ջուր

Հացիկ գյուղը խմելու ջրով ապահովում են երկու խորքային հորեր,որոնցից մեկը գտնվում է վթարային վիճակում:

Խմելու ջրի ներքին ցանցը կառուցված է 1965թ.-ին, գտնվում է բավարար վիճակում, վթարները վերացվում են օպերատիվ և ժամանակին:

2017թ. ընթացքում խորքային հորերի սարքավորումների վերանորոգման համար համայքի բյուջեից ծախսվել է 969 000 դրամ:

Քանի որ խորքային հորերից մեկը գտնվում է վթարային վիճակում, ջուրը չի բավականացնում,և գյուղի ջրամատակարարումն ապահովվում է 98%-ով:Համայնքի լիակատար ջրամատակարարումն ապահովելու համար անհրաժեշտ է նոր խորքային հոր, որի շուկայական գինը կազմում է մոտ 20 մլն.դրամ, որից համայքապետարանը պատրաստ է ներդնել 5մլն. դրամը:

Գազաֆիկացում

Հացիկ համայնքում գազաֆիկացված է 495 բնակարան: Համայնքապետարանը նպատակ ունի իրականացնել ամբողջ գյուղի գազաֆիկացումը:Այժմ գյուղը գազաֆիկացված է 95%-ով:

Փողոցների լուսավորում

2013 թվականից համայքապետարանը սկսել է համայնքի փողոցների լուսավորության ցանցի վերականգնման աշխատանքները, այժմ վերականգնվել է ցանցի մոտ 90%-ը: Ամեն ինչ արվում է ցանցի անխափան աշխատանքի համար:

2017թվականին փողոցների արտաքին լուսավորության ցանցի աշխատանքներն ապահովելու համար ծախսվել է 726.4 հազար դրամ:

Սանիտարական վիճակ

Համայնքի սանիտարական վիճակը բավարար է: Պարբերաբար կատարվում է աղբահանություն, ինչպես նաև շաբաթական աղբահանություններ:

2017 թվականին համայնքի բյուջեից աղբահանության համար ծախսվել է 1483.5 հազար դրամ:

Ապրանքի իրացում

Համայքապետարանը տարբեր կազմակերպությունների հետ կոորդինացնում է ապրանքների իրացումը: Մասնավորապես խաղողի բերքի իրացման գործում պայմանագրեր ունենք Երևանի կոնյակի գործարանի, «Արարատ» կոնյակի գործարանի, ՄԱՊ-ի, «Սամկոն» ՍՊԸ-ի հետ: Ստացված բերքը ժամանակին և անկորուստ իրացնելու համար ձեռք են բերվել պայմանավորվածություններ մի շարք վերամշակող գործարանների հետ: Այս տարվա ծիրանի բերքն անկորուստ հավաքելու և իրացնելու համար համայքապետարանն աջակցում է մի քանի արտահանող կազմակերպությունների, որպեսզի ծիրանի այգի ունեցողները բերքի իրացման որևէ խնդիր չունենան:2017 թվականի բերքի անկորուստ իրացմանը մեծապես նպաստեց պտղասառնարանի վերագործարկումը, որը հիմնանորոգվեց կառավարություն ներկայացրած ներդրումային ծրագրերի շրջանակում:Մասնավոր ներդրողի կողմից կատարվել է 13.5 միլիոն դրամի ներդրում:

Համայնքում առկա հիմնախնդիրներն են՝

1.Համայնքի մանկապարտեզի շենքի հարցը:
2.Նոր խորքային հորի հորատումը:
3.Մշակույթի տան հիմնանորոգումը:
4.Ներհամայնքային ճանապարհների մասնակի վերանորոգումը:

Հացիկ համայնքի ղեկավար՝ Ա.Եղիազարյան